ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարալանջ համայնք,հասցեն Գ. Սարալանջ
Հեռախոս 077007066

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա.Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ կից ներկայացնում ենք Լոռու մարզի Սարալանջ համայնքի ավագանու 27.02.2017թ.,թիվ N03-Ն որոշումը:

Առդիր 4 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔ

✉ գ. ☎-077007066
- saralanj.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 27 » փետրվարի 2017 թվականի թիվ 03 -Ն

ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով `

Սարալանջ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Սարալանջ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2.Հաստատել 2016 թվականի Սարալանջ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
3.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Արթուր Ալեքսանյան			
Գառնիկ Ալեքսանյան			
Վարդան Հարությունյան			
Արման Հարությունյան			
Նունե Բիձյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Սարդոյան

ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Լոռու մարզի Սարալանջ համայնքի համայնքապետարանի 2016 թվականի կատարած աշխատանքների մասին.

Կատարված աշխատանքները ներկայացվում են ըստ պարտադիր և պատվիրված լիազորությունների, և ըստ գործունեության ոլորտների՝

Բյուջեի կատարումը եկամուտների և ծախսերի գծով

1.եկամուտներ

Եկամուտների տեսակը	2016թ.ն ախատեսված	կատարված	կատ.%
հողի հարկ	1210.1	590.1	48.8%
գույքահարկ՝ փոխադրամիջոցներից	284.9	214.5	75.3%
գոյքահարկ՝ համայնքի տարածքումգտնվող շենք,շինությունների համար	44.7	44.7	100%
Գույքի վարձակալությունից եկամուտներ	103	100	97.1 %
համայնքի սեփ. հանդիսացող հող. վարձ	290.0	325.1	112.1%
պաշտոնական դրամաշնորհներ	3500	3500	100.0%

2.Ծախսեր

2016 թվականին վճարվել է համայնքապետարանի աշխատակիցների աշխատավարձերը և սոց. վճարները՝ ուստի պարտքեր չեն կուտակվել:

2016 թվականը շատ բարենպաստ էր գյուղատնտեսության համար՝ ՀՀ կառավարության և Լոռու մարզպետարանի աջակցությամբ 2016թվականի

ընթացքում ձեռք է բերվել բարձրորակ գարու, կորնգանի և աշնանացան ցորենի սերմացուներ, ինչպես նաև դիզ. վառելիք և պարարտանյութեր, որոնք շուկայականից ցածր գներով բաշխվել է համայնքի տնտեսություններին:

2016 թվականին Սարալանջի համայնքի տնտեսությունների կողմից արտադրվել է՝

կարտոֆիլ	- 3920 գ.
բանջարեղեն	- 450 գ.
խոտ	- 7500 գ.
հացահատիկ	- 5164 գ.
ծղոտ	- 2500գ.

Նշված ապրանքների բերտվությունը գտնվում է՝միջին մակարդակի վրա:

Ցանվել է 128 հա. աշնանացան և կատարվել է 45 հա. ցրտահերկ:
Ինչպես նախորդ տարիներին այնպես էլ 2016 թվականին նկատվեց անասնապահության առաջընթաց, ավելացել է խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, հավերի քանակը, ինչպե նաև մեղվաընտանիքների քանակը,որը նույնպես ավելացել է:
Համայնքում պարբերաբար կատարվում է անասունների պատվաստման միջոցառումներ, որի շնորհիվ 2016թվականին վարակիչ հիվանդություններով վարակված անասուններ չեն եղել:
Համայնքը գազաֆիկացված է , ճանապարհները գտնվում են լավ վիճակում:
Համայնքը չունի ջրի խնդիր, մոտ 5կմ-ից ջուրը հասնում է համայնք:
2016թվականի ընթացքում համայնքի 17 տնտեսություններ ներառվել են ՀՀ կառավարության կողմից << Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության տրամադրման>> ծրագրին, որը նպաստել է գյուղատնտեսության զարգացման և բերքատվության բարելավմանը:

Համայնքապետարանը և համայնքի հիմնական դպրոցը սերտ համագործակցության մեջ են՝ կազմակերպում են միջոցառումներ կապված տոնակատարությունների հետ:

Համայնքը ունի փոստային բաժանմունք:

Համայնքի բնակիչները օգտվում են <<Vivacell-MTS>>-ի ծառայություններից: Ապրանքների համայնքապետարանը 2016թվականին սերտ համագործակցել է տարածքային սոցիալական ծառայության, զգոնի բաժանմունքի, անձնագրային բաժանմունքի, ոստիկանության, զինկոմիսարիատի և այլ պետական և ոչ պետական ծառայությունների հետ:

Համայնքում զինապարտներ չեն եղել:

Համայնքապետարանի աշխատակիցները 2016 թվականին աշխատել են անթերի: Բոլոր հաշվետվությունները ներկայացվել են ժամանակին և ճիշտ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Ասլրոյան